Հուշաթերթ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի համար

Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային միջոցների կիրառման:

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից:

Հուշաթերթ-հրահանգը օժանդակ ռեսուրս է հանձնաժողովի անդամի կողմից գործառույթին համապատասխան ընտրողին որակյալ ծառայություն տրամադրելու համար:

ARCHEVNEBI 2024

- Կարգավորե՛ք քվեարկության շենք մտնող ընտրողների հոսքը:
- Քվեարկության շենք մտնել թույլ տալու նպատակով ընտրողին խնդրե՛ք ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Ընտրողը քվեարկությանը մասնակցում է, եթե ներկայացնում է անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը.
  - ✔ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական,
  - ✔ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ոչ էլեկտրոնային վկայական (որը չունի տեղեկությունների էլեկտրոնային կրիչ),
  - ✔ Վրաստանի քաղաքացու անձնագիր:

- Նշմարումը ստուգող սարքի (ուլտրամանուշակագույն լապտեր) օգտագործմամբ ստուգե՛ք ընտրողի ձեռքի վրա չկա արդյոք նշմարում:

Հիշե՛ք:

Ընտրողը, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), չի անցնում նշմարման ստուգման ընթացակարգ:

Ստուգման արդյունքների նախատեսմամբ.

- ✔ Եթե նշմարումը ստուգող հատուկ սարքը պարզում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Բացատրե՛ք ընտրողին ընտրատեղամաս մտնելը մերժելու պատճառը, իսկ ընտրողի մասին տվյալները հաղորդե՛ք հանձնաժողովի քարտուղարին՝ գործավարության մատյանում ընդգրկելու նպատակով:
- ✔ Եթե ընտրողը բավարարում է քվեարկությանը մասնակցելու համար սահմանված պահանջները, ընտրողին ցուցո՛ւմ տվեք մոտենալ այն գրանցման սեղանին, որին պատկանում է ընտրական ցուցակի մեջ ընդգրկված նրա ազգանվան առաջին տառը և ընտրողի համարը ընտրացուցակում: Եթե համապատասխան գրանցման սեղանի մոտ երկու ընտրող է կանգնած, ժամանակավորապես դանդաղեցրե՛ք ընտրողի մուտքը քվեարկության շենք: